

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը Նոր ուսումնական տարվա առթիվ

31.08.2019

Սիրելի հայրենակիցներ

Ամեն մեկիս կյանքում առանձնահատուկ տեղ ունի Սեպտեմբերի 1-ը, որը մեզ քաղցր հուշերով ու ամուր թելերով կապում է դպրոցի , գիտության ու կրթության հետ, որոնք միշտ էլ վճռորոշ դերակատարություն են ունեցել յուրաքանչյուր անձի զարգացման և կայացման հարցում:

Նոր Հայաստանում նորովի պետք է արժեւորվեն կրթությունն ու գիտությունը՝ որպես մեր հայրենիքի առաջընթացի ու բարօրության հաստատման նախապայման: Մենք հետեւողականորեն կշարունակենք կրթական բարեփոխումները, որպեսզի մոտ ժամանակներում ունենանք արդի չափորոշիչներին համահունչ ու մրցունակ կրթական համակարգ:

Շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի օրվա եւ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, ցանկանում առաջադիմություն ուսման մեջ, խաղաղ հայրենիք, ստեղծագործ աշխատանք:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան